Ալեքսանդր Ծատուրյան

Մայիսի մեկը

Սքանչելի գարնան այս քա՛ղցր ժամին,
Երբ բընությունը չքնաղ հարսի պես,
Պճնված, զարդարված, ժպիտը դեմքին,
Կարծես, հարսանյաց առնում է հանդես.
Եվ լուսո աղբյուր արևը պայծառ
Անամպ երկնքից անուշ ժպտելով,
Առատ ցողում է շիթեր ոսկեվառ,
Այդ ճոխ հանդիսին վսեմ փայլ տալով
Եվ իմ չորս բոլոր բուռըն հըրճվանոք
Եռում է կյանքը բընության ծոցում.
Տեսնում եմ մարդիկ երջանիկ, անհոգ,
Երգ ու գինիով գարունն են օրհնում…
Այդ քաղցրը ժամին, հայրենիք անգի՛ն,
Ինձ պաշարում է մի այլ զգացում.
Անհագ տենչանքով իմ մատաղ հոգին
Դեպի կենսատու քո ծոցն է թռչում:
Եվ ռոպեական շքեղ երազներ
Իսկույն գալիս են ինձ այցելություն
Ահա՛ տեսնում եմ քո կանաչ դաշտեր,
Այգիք ծաղկավետ, աղբյուրք կարկաչուն…
Ես քո գրկումն եմ… երկի՛ր անուշիկ,
Եվ ոգեշնչված քո սերն եմ երգում…
Բայց ո՞հ, ցնդում են երազներ գողտրիկ,

Եվ նորից ինձ քո կարոտն է տանջում…

1889, 1 մայիսի

Մոսկվա